Այսոքիկ գրեանք ընթերցան 'ի ժողովի այլազգեաց, և Քաղաքապետն ստիպէր զԴատաւորն կատարել զհրաման Բդեշխին․ և 'ի չառնուլ նորա յանձն՝ ցրուի ժողովն։

Եւ ապա կոչեալ առանձին զՀայս ցուցանէ նոցա ըզ-գիրն, և զարժանաւոր պատասխան նորին։ Ի վաղիւ անդ կոչեաց զնոսա Քաղաքապետն և ընթերցաւ առաջի նոցա զգիր Կուսակալին, եւ խնդրեաց զտումար կանթեղաց, պատկերաց, շինուածոց և այլոց իրաց, որք եղեն յերկս տեղիս։ Հայք ետուն պատասխանի՝ չիք մեր արարեալ նորաստահման ինչ՝ այլ որ ինչ միանգամ եղեն հրամանաւ Արքայի և 'ի ձեռն պաշտօնէից և ձեր եղեն և կատարեցան, և գրեցաւ Իլամ և Հէօճճէթ և առաքեցան 'ի պատշաճաւոր տեղիս Թէ՝ ըստ հրովարտակին Սէլիմայ երկաւ ազգք բաժանորդ են 'ի նոյն տեղիս, զամենայն ինչ դուք արարիք՝ որպէս գիտէք, այնպէս գրեցէք․ զի մեք 'ի սեփհական տեղիս մեր՝ անկախ, և 'ի բաժանորդս՝ բաժանորդ եմք, զի եթէ է ոք դատախազ՝ ինքն յայտնապէս խօսեսցի, զի աւելի ինչ ոչ եմք արարեալ՝ և եղեալքն հրամանաւ ձեր եղեն։ Եւ սենեակն Բեթղեհէմի, որպէս գրեալ է Կուսակալն, ոչ է այն սենեակ, այլ պահարան 'ի պահպանութիւն անօթոց, եւ այն եւս դարձեալ գիտութեամբ ձեր, այլ զտումար կանթեղաց և այլոց իրաց ոչ կարեմք տալ, զի Արքունի գրեանք ոչ յայտնեն զայդպիսի ինչ։ Իսկ Քաղաքապետն ստիպէր զնոսա ասել՝ որ ինչ եղեւն 'ի ժամանակի բաժանորդութեան, և զայնոսիկ համարեսցի նորաստահման իրս, և որսացեալ բան ինչ 'ի բերանոյ նոցին՝ արկցէ զնոսա յորոգայթ իւր, և այնպէս պատասխանի արասցէ Կուսակալին։ Այլ նոքա միշտ զնոյն բան երկրորդեցին, հրամանաւ Արքայի 'ի բաժանորդ տեղիս հաւասար լինել Յունաց․ իսկ որ գրեալ եցոյց Բդեշխին հաւաստեաւ զթիւ պատկերաց և այլոց իրաց՝ իբր նորաստահման՝ նա վկայեսցէ և ամաչեսցէ զնա։ Ընդ այս շառագունէին երեսք Քաղաքապետին, եւ ինքն երդնոյր թէ չէ գրեալ ինչ․ իբրեւ ոչ կարաց որսալ բան ինչ 'ի բերանոյ նոցա, սկսաւ թախանձել զԴատաւորն և զմեծամեծս այլազգեաց գրել Իլամ և հանրագիր վասն եղելոց, զի մի ինքն ստախօս երեւեսցի։ Դատաւորն զայս միայն առնէր